

**ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ
ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ
ԴՈՒՐՆԱՅԻ ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԱՑՅԱԼ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ՄԻՋԵՎ ԿՆՔՎԵԼԻՔ ՓՈԽԸՄԲՈՒՆՄԱՆ ՀՈՒՇԱԳՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Հավանություն տալ Դիլիջան քաղաքում Միջազգային գիտակրթական և տեխնոլոգիական կենտրոն հիմնադրելու մասին Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության և Ռուսաստանի Դաշնության Դուբնայի Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտի միջև կնքվելիք փոխըմբռնման հուշագրին՝ համաձայն հավելվածի:

ՀՀ էկոնոմիկայի նախարար Ներսես Երիցյան

ՓՈՒՆԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտի և Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության միջև Դիվիզան քաղաքում (Հայաստանի Հանրապետություն) Միջազգային գիտակրթական և տեխնոլոգիական կենտրոն (ՄԳԿՏԿ) ստեղծելու մասին

Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտի (ՄՀՄԻ) և Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության (այսուհետև՝ Կողմեր) միջև բանակցությունների արդյունքում Կողմերը պայմանավորվեցին հետևյալի մասին.

1. Կողմերն աջակցում են ՄԳԿՏԿ-ի ստեղծմանը հետևյալ նպատակներով.

- սույն Հուշագրի 2-րդ կետում նշված գիտատեխնիկական գործունեության հիմնական ուղղություններով Հայաստանի Հանրապետության և ՄՀՄԻ մասնակից երկրների ներուժի ինտեգրման,

- համատեղ գիտատեխնիկական նախագծերին մասնակցության,

- Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև կնքված գիտատեխնիկական համագործակցության համաձայնագրերի շրջանակներում ինովացիոն գործընթացների զարգացման,

- կրթական ծրագրերի մշակման և Ռուսաստանի Դաշնության կրթական հաստատություններում Հայաստանի Հանրապետության համար բարձր որակավորման մասնագետների պատրաստման:

2. Համատեղ գիտատեխնիկական գործունեության հիմնական ուղղություններն են.

- այլընտրանքային էներգետիկա,

- նանոտեխնոլոգիաներ և նանոչափ նյութեր,

- տեղեկատվական տեխնոլոգիաներ,

- բժշկական սարքաշինություն:

3. Համատեղ կրթական գործունեության հիմնական ուղղություններն են.

- նյութագիտություն և նյութերի տեխնոլոգիա՝ ներառյալ նանոտեխնոլոգիաները և նանոչափ նյութերը,

- միկրո և նանոէլեկտրոնիկա,

- տեղեկատվական հաշվողական տեխնոլոգիաներ,
- կոնդենսացված վիճակի ֆիզիկա:

4. Կողմերը ողջունում են Առաջավոր տեխնոլոգիաների միավորման (ԱՄՊԵԿՏ), ՌԴ ԳԱ Ֆիզիկատեխնիկական ինստիտուտի (ԳԱ ՖՏԻ), «Դուբնա» Միջազգային համալսարանի, Պետական տեխնոլոգիական համալսարանի համաձայնությունը՝ մասնակցելու ՄԳԿՏԿ-ի ստեղծմանը:

5. Կողմերի փոխադարձ համաձայնությամբ սույն Փոխըմբռնման Հուշագրում՝ նրա անբաժանելի մասը կազմող առանձին Արձանագրությամբ, կարող են մտցվել փոփոխություններ և լրացումներ:

6. Սույն Փոխըմբռնման Հուշագիրը կազմվում է անորոշ ժամկետով և ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության կողմից -----	Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտի կողմից -----
Ն.Հ. Երիցյան Նախարար	Ա.Ն.Սիսակյան Տնօրեն